

# Ավետիք Իսահակյան

## Պավլո Տիչինային, 1954թ․, հուլիսի 13

Թանկագին Պավլո Գրիգորևիչ.
Ամենաջերմ ողջույններ Ձեզ Երևանից:
Շատ եմ խնդրում ներել, որ մի հարցով անհանգստացնում եմ Ձեզ: Նամակս Ձեզ հանձնողը, առաջին քուրդ նկարիչ Բագո Կալոևը, ով ավարտել է Երևանի գեղարվեստական ուսումնարանը, ջերմ ցանկություն ունի շարունակելու իր ուսումը, որպես նկարիչ, Կիևի գեղարվեստական ինստիտուտում:
Նա հետաքրքրական կենսագրություն ունի – նախկին հովիվ է, որբ: Շատ եմ խնդրում օգնել նրան իր ցանկությունն իրականացնելու, ինստիտուտ ընդունվելու:
Նախապես շնորհակալություն եմ հայտնում:

Ջերմագին հարգանքներով,
Ձեր՝ Ավ. Իսահակյան